


ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
Ն. ՓՈՐՈՍԵԱՆ
 ՆԱՄԱԿ ԿԱՐ ՈՐ ԵՒ Ե ԳՊՈՒԹՈՒՆ
 ՊԵՏՐ Ե ՈՒՂՂԱՆԻ ԱՌ
 Խմբագր. ԱՐՇԱԼՈՅՍ Իրագրի
 ԳԱԶԻՐԷ (Հասցայանիէ)

Rédaction du journal arménien
ARCHA LOUICE
 HABBANIEH LE CAIRE (Égypte)



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՆԱԲԹԻ ԵՒ ՇԱՔԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՆ

ԵԻՊՏՈՍԻ ՉԱՄԱՐ	
Տարեկան, ողջ դահկն.	60
Վեցամսեայ	35
ՕՏԱՐ ԵՒԿՈՐՆԵՐ	
Տարեկան Ձրանգ	20
Վեցամսեայ	12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՆԸ ԿԱՆՆԻԿ Է
 ԵՒ ԹՂՔԱՏԱԿԻ ՇԱԽՐԸ
 Խմբագրութեան վրայ:

Խմբագրութեան ուղղութեամբ
 գրութիւնք եւ չ'են տրուիր:

ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

ՕՏԱՐ ՄԱՍԼՈՅ ՄԷՁ

Եգիպտահայոց Առաջնորդի ընտրութեան խնդիրը, որ ժամանակէ մը ի վեր լուծեան մէջ խորասուզուած էր, վերջերս ո՛չ միայն հայ թերթերու՝ այլ և օտար մամլոյ մէջ իր արձագանքը կուտայ:

Որչափ որ մեր Գահիրէի և Աղէքոանի ընդ Առաջնորդարանները — իրենց շատ հին սովորութեան համաձայն — յամառին տեղական հայ թերթին հաղորդելու հանրութեան օգտին և զնառն վերաբերող լուրերը, այսու ամենայնիւ մենք առանց վարանելու կրնանք հետեցնել թէ՛ ազգային պաշտօնական շրջանակներուն մէջ մտքերը զբաղեցնող ամենէն կարևոր խնդիրներէն մին եղած է Առաջնորդի ընտրութիւնը, զոր հակառակ իր կարևորութեան շատ սահմանափակ լուծեան մէջ կատարել կ'ուզուի:

Ասոր գլխաւոր և պերճախօս ապացոյցներէն մին է, Պոլսու Էթիքայիէնի 13 դեկտ. թուոյն մէջ երեցած թղթակցութիւն մը, որուն պարունակութիւնը ստորագրողին հարապատ գաղափարներն ըլլալուն վրայ բացարձակապէս կը տարակուսինք և պարտաւորութիւն կը համարինք մեզ, անգամ մը ևս զբաղիլ առաջնորդական խնդրով և եգիպտացեան հայ ժողովուրդին ուշագրութիւնը հրաւիրել մութի մէջ կատարուած այս դարձուածներուն վրայ:

Պոլսի պատահական թղթակցը, որ հանրային օգուտը շոջափող խնդիրներով զբաղող մէկը չ'կարծուիր ըլլալ, և միևնոյն ժամանակ նոյնչափ ալ անտեղեակ լինելու է առաջնորդի ընտրութեան օրէնքներուն, այս ընտրութեան յապաղումը միմիայն Վ. Պօղոս և Տիգրան փաշաներու բացակա կաշուութեան կը վերագրէ:

Եւ մոռնալով կամ բոլորովին անտեղեակ ըլլալով թէ 98 ապրիլ ամսոյ մէջ կատարուած երկու առաջնորդ միանգամայն ընտրելու ձևը ապօրէն և հակասահմանադրական էր, կը յանգի սա եզրակացութեան թէ, այժմ քանի որ փաշաները վերագրուած են և քանի որ Ամեն. Իզմիրլեանի ընտրութիւնը Բարձրագոյն Դռնէն վարեցած յէ՛, և դարձեալ, քանի որ Ռոտտոթոյի առաջնորդն ալ ամիսէ մը աւելի է արդէն իր հրատարականք մատուցած է այն տեղի

առաջնորդութենէն, հետևաբար պատճառ մը մնացած չէ՛ վերնտրել զայն՝ կամ 98 ի ապօրինի ընտրութիւնը վաւերացնել տալ յանձին Ռոտտոթոյի հրատարակ առաջնորդին, որ շատ մը արժանիքներով ալ օժտուած է եղեր:

Մենք թէև Այվազեան Եպիսկոպոսին վերագրուած արժանիքներուն և ոչ՛ մէկի մասին հաստատական կարծիք մը կրնանք յայտնել, թողով զայն անոր ներկային և անցեալին մասին ծանօթ անձնաւորութեանց դատողութեանը, սակայն վստահութեամբ կրնանք ըսել թէ Պոլսի թղթակցը պարզապէս պաշտօնական շրջանակի անձնաւորութիւններէ թերագրուած և անոնց մէկ զրածին տակ ստորագրելու թեթևամտութիւնն ունեցած է:

Ապա թէ ոչ, անձանօթ չէ թէ Այվազեան Եպիսկոպոս, ինչպէս երբեմն առաջնորդարանի շրջանակին մէջ առհասարակ խօսքի նիւթ եղած էր, նախ քան Ռոտտոթոյի առաջնորդ ընտրուելը, գրաւորապէս դիմած էր հանգուցեալ Նուպար փաշայի և Նորին Վսեմութիւն տեսնելով որ Պատրիարքարանի կողմէ ալ օժանդակութիւններ և յանձնարարութիւններ կան, ընդունած էր որ Այվազեան Եպիսկոպոս եգիպտոսի Առաջնորդութեան կոչուի. և ըստ այսմ այն ատեններն Փարիզէն մասնաւորապէս գրած էր Նորին Վսեմութեան Պօղոս փաշայի և մնացեալը արդէն դիտենք, որ Ամեն. Իզմիրլեանի Քանթիքան եղաւ, ինչ որ Սահմանադրութեան օրէնքները չէին թոյլատրէր սակայն փաշաները անգամ մը ըսած էին...

Երբ այս ամենը մեր ընթերցողաց կը ներկայացնենք, այլ ևս տեղի չ'մնար ֆրանսերէն թերթի մը ուղղուած թղթակցութեան արժէքը և անոր ստանձնած դերը վերլուծել միայն կարևոր կը համարինք Պոլսի թղթակցին հարցնել թէ, եգիպտահայ ժողովուրդը, Օրմանեան Պատրիարքէն սիրուած և Արթին փաշա Տատեանի վստահութեան արժանացած ու անոր պաշտպանութեամբ եգիպտոսի Առաջնորդ ընտրուած ատեն, պէտք եղած յարգանքը պիտի ընծայէ՞ Այվազեան Եպիսկոպոսին, որչափ որ ալ սա բարի սրամազրութիւններով օժտուած ըլլայ և շնայ օգտակար ըլլալ եգիպտահայոց: Մեր կարծիքը բաւականաչափ նպաստաւոր չէ այս մասին:

Մենք ալ պիտի փափաքէինք որ հան-

գուցեալ Նուպար փաշայի վերջին օրերուն մէջ արտայայտած հաւանութիւնը իրականութիւն գտնէր. (գործերու ընթացքն ալ ցոյց կուտայ թէ պիտի գտնէ) սակայն արդեօք Այվազեան եպիս. եգիպտոսի առաջնորդ դառնալով պիտի կրկնայ օգտակար և սիրելի ըլլալ հայ ժողովուրդին, քանի որ եգիպտահայ ժողովուրդը 1000 ի մտ ստորագրութեամբ Իզմիրլեանը ուղած էր և դեռ պատասխան մ'ալ ընդունած չէ, եթէ պատասխանուելու համար հաւաքուեցան այդ ստորագրութիւնները. . . . Ահաւասիկ պարագայ մը, որ եգիպտահայ ժողովուրդին խաղաղութիւնը չ'վրդովելու համար պէտք չէր որ վրէպէր զինքը ընտրութեան ուշագրութեան, որչափ որ ալ պոլսի պատահական թղթակցը շնորհաւորէր Երեսփ. ժողովին կատարած երբեմնի ձախող ընտրութիւնն և որչափ որ վերացական գոյնստներ չուայէր ընտրելոյն նկատմամբ:

Մենք անգամ մը ևս պիտի կրկնենք թէ՛ Պատրի. Երեսփոխան ժողովոյ անգամը Այվազեան Եպիսկոպոսի ընտրութիւնը վերջնական ձևի մը վերածելու ջանքեր ընելէ առաջ, պէտք է որ եգիպտացեան հայ ժողովուրդին դիտաւորութիւնները աղէկ ըմբռնեն և ըստ այնմ վարուին՝ ապագայ բարոյական պատասխանատուութիւններէ ազատ մեալու համար:

ԵՂԻՇԷ

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

ԹԱԳԻՈՐ ՓԱՇԱՅԻ ԿՏԱԿԸ

Հանգուցեալ Թաղուր փաշա, Աւստրիական հպատակ, իր կենդանութեանը կը տակով մը 5000 յորայի արժեթուղթ կը սահմանէ և կտակաւատար կարգելով Վսեմ. Տիգրան Ապրօ և Պօղոս Նուպար փաշաները, պարտք կը դնէ անոնց վրայ, նոյն արժեթղթերը Գերմանական դրամատան մէջ պահպանել և բազմապատկել կտրոններու արդիւնքովը. պարտք կը դնէ նաև իր որդւոյն Լեոն պէյի վրայ՝ որ երբ չափահաս ըլլայ նոյն գումարով Իզմիրի մէջ հիմնէ Աղջկանց վարժարան մը Դարուհեան անուամբ, ի յիշատակ իր աղջկան՝ վաղամեռիկ Դարուհիին:

Բարեյիշատակ կտակարարին որդին՝ Լեոն պէյ, թեակոված է այժմ չափահաս-

սուժեան տարիքը, և կուակակատարները կըտակին գործադրութեան ժամը հասած կը համարին:

Քաղցր է յուսալ, կ'ըսէ Արեւելի, որ Լեւոն պէյ յարգելով իր երկու ողբացեալ սիրելիներուն յիշատակը՝ անվրէպ պիտի գործադրէ հօրենական կտակը, այս առթիւ ազգու դաս մը տալով նաև անոնց, որոնք մեռեալի մը հարստութիւնը կը ժառանգեն, սակայն անոր վերջին կամքը կ'արհամարհեն և յիշատակը կ'անպատուեն:

ՈՐԲԱՍԻՐԱՑ ԸՆԿ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՐ

Անցեալ կիրակի Դեկտ. 10, մինչ Ազգային Առաջնորդարանը իւր ուզած եւ ընդունած եղանակաւ Երեսփոխաններու թիւը ամբողջացնելու եւ տեւէ էր, միւս կողմանէ Որբասիրաց ընկերութիւնն ալ, կէս օրէ ետք ժամը Չիւր Ապու-Սալիլի թատրոնին մէջ Ընդհանուր ժողով կը գումարէր, կարգադրելու համար մասնաւոր նպատակներով առկա ձգուած շատ մը ընթացիկ գործեր, որոնք Որբասիրաց ընկերութեան գոյութիւնը վտանգելու հանգամանք ունէին:

Ընդհ. ժողովոյ անդամներն՝ նախ թուով 34 եւ ապա վիճարանութիւնք երկարելուն եւ ժամանակը անցած ըլլալուն պատճառաւ ոմանց մեկնումովը՝ թուով 28, հետեւեալ որոշումներն ըրին:

1. Քննել եւ ստուգել վերջ թէ՛ ընկերութեան ընթացիկ գործոց ձգձգման եւ յարատեւութեան միակ եւ գլխաւոր արգելքներն էին, ինչպէս առ Գործ. ժողովն ուղղեալ իրենց մէկ պաշտօնական գրութիւնն ալ կը հաստատէր, Ընդհ. Դիւանի Ատենապետն՝ Պ. Ն. Ազազարեան, և Ատենապետին՝ Առաջնորդարանի օգնական գրագիր Պ. Գուրգէն Միրիճանեան, որոց մասին յետ երկար վիճարանութեանց, ժողովոյ մէջ պարաստուած բանաձեւի մը համաձայն, երեքի դէմ քանակահարկ պարսաւանաց քուէներով հրաժարեցնելու (1) որոշումը տուաւ՝ եւ գաղտնի քուէով նոր ու առժամայ ընդհ. Դիւանի մը ընտրութեան ձեռնարկեց:

2. Առժամայ Գործադիր ժողովոյ պակասեալ երկու անդամոց տեղ, որոնք ինչպէս հասկցուեցաւ, Դիւանի հրաժարեցուցեալ Ատենապետին եւ Ատենապետին թեկադրութեամբ իրենց հրաժարականներն մատուցած էին ապօրէն եղանակաւ, երկու նոր անդամներ ընտրեց:

3. Հաստատելով որ առժամայ Գործադիր ժողովն իր ջանքերը խնայած չէր ընկերութեան յառաջդիմութեան եւ զարգացման համար եւ անդամոց թիւը՝ չնորհիւ իւր ջանքից, պաշտօնի սկսելու օրէն իրենց յանձնուած անդամոց թուոյն կրկնապատիկ եւ աւելիին բարձրացուցած էր, մէկ ամիս եւս երկարաձգել որոշեց անոնց պաշտօնավարութեան տեւողութիւնը, եւ ինչդեռ որ առօրեայ գործառնութիւնները չ'ընդհատուելու համար, երկու նորընտիր անդամոց հետ բարեհաձին շարունակել:

4. Ընդհ. ժողովոյ ներկայ անդամք, նկատելով որ մինչեւ ցարդ Գործադիր ժողովոյ յանձնուելու ուզուած չէ ընկերութեան կանոնադիրը, հակառակ Գործ. ժողովոյ կողմէն Մայր Դիւանին եղած դիմումներուն, արտօնեց նորընտիր Դիւանին ինչպէս նաեւ Գործ. ժողովն, որպէսզի ընդ փոյթ նոր կանոնագրի մը խմբագրութիւնը կատարէ, ի հարկին իրեն մշակիցներ առնելով ընկերութեան ձեռնհաս անդամներէն, եւ առաջիկայ Ընդհ. ժողովոյ գումարման օրը բոլոր ընկերաց հաւանութեանը ենթարկէ:

Ընդհանուր ժողովոյ անդամք մեկնեցան ժամը 6 1/2ին ատենները:

(1) Թէեւ Գործադիր ժողովն իր մէկ յայտարարութեան մէջ կ'ըսէր թէ Դիւանի Ատենապետն հրաժարած է, (Ասեմապետական զգուշաց. ' . ') սակայն Ընդհ. ժողովոյ անդամք այս հրաժարումը ազօրէն եւ անընդունելի դատեցին՝ որովհետեւ Դիւանի Ատենապետն իր հրաժարականը Ընդհ. ժողով գումարելով միայն կարող էր մատուցանել, քանի որ իր պաշտօնը Ընդհ. ժողովոյ անդամներէն ստացած էր եւ ոչ թէ Գործ. ժողովէն, մասնաւոր թէ՛ Գործադիր ժողովն առժամայ հանգամանք մ'ալ յանձին կը կրէր:

ԵՐԵՍՓՈՒՆ ԺՈՂՈՎՐ

Հետեւեալ նամակը ստացած ենք օրուան կարևոր խնդիրներուն վրայ, կը յուսանք որ շահեկանութիւն կրնայ ունենալ անոր հրատարակումը:

Գահիրէի մեծ աղաները ելած հոս ու հոն կը իստին թէ «յիշուի, չ'իշուի» ի համար իմ տունս ժողովը եղած եւ ծանօթ հանրագրութեան հեղինակը եւ եղած եմ: Որչափ սխալ, եւ տասեւհինգ օրը մի անգամ քաղաք կ'իջնեմ անական պակասներս գնելու համար, եթէ լրագիրը չ'գրէր, լուր անգամ չ'պիտի ունենայի. եւ եթէ հանրագրութեան հեղինակները ինձ ներկայանային ստորագրութիւնս պահանջելու, այսպէս պատասխան պիտի տայի թէ. «ներկայ ազգային վարչութիւնն ըսած ժողովն»-ի օրինաւորութենէ զուրկ է եւ այսպիսի պատճառաւ մը դիմել եւ խնդրելով զանոնք իրենց պաշտօնին մէջ քաջալերել է. ուստի եթէ պահանջները օրինաւոր իսկ ըլլայ՝ ժողովրդի ձայն լսելէ չ'են արտօքի. առ ասանկ միապետական գրութիւն մ'է որ կ'երթայ, երկրորդ՝ «յիշուի»-էն արդիւնք մը չ'եւելլէն ի զատ, Կ. Պոլիս երթեւեկող մեր ազգայնոց աւելի խառութեան ենթարկելու պատճառ կ'ըլլաք:»

Իզմիրեան Սրբազանի օրով Տ. Ռշտունի եւ Փայագեան «յիշուի» գաղափարին մէկ օր յառաջ երբ յայտնեցին ինձ, խրատեցի հեռի կենալ այդպիսի ցոյցերէ եւ երկու կուսակցութիւնը ծայրայեղ աստիճանի գրգռելէն ուրիշ արդիւնք չ'ունենալը նկարագրեցի. ներկայութեանս համոզուեցան՝ քայց հետեւեալ օրը հակառակը գործեցին. Տիար Միրիճան Տատուրեան ներկայ էր, կը վկայէ, եւ նոյն իսկ Պ. Ռշտունի համոզուելէն վերջ հակառակը գործած ըլլալով չեմ յուսար որ ուրանայ:

Գահիրէի Երեսփոխանութիւնը օրինաւոր Սահմանադրական ըլլալու համար, նախ պարտի Գահիրէ ընտրելու ժողովուրդին իւր թաղական խորհուրդը ընտրել տալ, ինչպէս որ օրէնքը կը տրամադրէ. այնուհետեւ կուգայ Երեսփոխանաց ընտրութիւնը, երրորդ քաղաքիս Երեսփոխանաց թիւը 16 ըլլալը եթէ կուգին, այն ատեն մէկ երրորդը այսինքն 5 Երեսփոխաններ Աղեքսանդրիացիք պէտք է որ տան, որպէսզի ըսուի «Գաւառային երեսփոխանական վարչութիւն», քանի որ մինչեւ հիմայ գործադրուած չէ այդ եւ Գահիրէի երեսփոխանութիւնն ալ ժողովուրդին իրաւունքը իւրացուցած է, կամքին ուզած ժամանակը երեք անձինք կանչելով թաղական կ'ըտրէ (սէնի փափագ իմ թիւմ) ի գրութեամբ:

Ժողովուրդը նախնապէս իւր թաղական խորհուրդը ընտրելուն սպառնացը:

«Ազգային Սահմանադրութեան Գործադիր ժողովն մայրաքաղաքիս ամէն թաղերուն հրաման զրկեց, թաղական խորհուրդներն ընտրել տալու, որպէսզի երեսփոխանաց ընտրութիւնը ժամ յառաջ կատարուի» տե՛ս Կիլիկիա կիսամասայ լրագրոյ 1 յուլիս 1863, երես 308:

Գահիրէի երեսփոխանութիւնը օրինաւոր ընթացք մը կամ պատուաւոր ըլլալու համար քաղաքիս Առաջնորդը կամ Տեղապահը, անկողմնակալ լուրջ, 5էն մինչ 7 անձերէ Գործադիր ժողով Սահմանադրութեան անուամբ ժողովք մը կ'ընտրէ, եւ այս ժողովը Գահիրէքնակ ազգայնոց իրենց թաղական խորհուրդը ընտրել կուտայ. երկրորդ է երեսփոխանաց ընտրութիւնը, որ կը ձեռնարկէ թաղական խորհուրդին հետ միասնալով, երբ Գահիրէի 16 երեսփոխանաց ընտրութիւնը լրանայ Աղեքսանդրիոյ թաղական խորհուրդին հետ միասնալով Աղեքսանդրացի ընտրելիք 5 երեսփոխանները ընտրելու կ'աշակցի եւ հոն կը լրանայ իր պաշտօնը:

Տե՛ս Կիլիկիա 329 երես. «Մայրաքաղաքիս թաղական խորհրդոց ընտրութիւններն հեռզհեռ ըմբռնու վրայ են, տեղ տեղ անհամաձայնութիւն տեսնուեցաւ. քայց Սահմանադրութեան Գործադիր ժողովոյ զգոյն խնամովքն շուտով համաձայնեցան

որուն չ'որհակալ ըլլալ պարտիք ազգովին: (Պուսալաները ինչո՞ւ ձերբակալել չ'են սուած) (1):

Քանի որ Աղեքսանդրիացիք իրենց երեսփոխանները մինչ ցարդ չ'են ներկայացուցեր, տեղիս Գաւառային երեսփոխանական վարչութիւնն ալ օրինաւորապէս կազմակերպեալ չ'կրնար համարուել. հետեւաբար իւր ըրած կամ ընելիք ամէն գործողութիւնք ապօրինի են եւ անվաւեր:

«Արշալոյս» լրագիր Տ. Խմբագրին երեսփոխանաց պակաս անդամոց համար գրած դիտողութիւնէն զգածեալ, կարծեցին թէ պակաս անդամները ընտրելով օրինաւորութեան մէջ կը մտնեն, ուստի կ'աշխատին պակաս անդամները ընտրել տեսակ տեսակ ձեւերու տակ. «Ազգային տուրք»-ի մասին վերջէն պիտի խօսիմ, որ երբէք պահանջելու իրաւունք չ'ունին ոչ քուէէն յառաջ եւ ոչ վերջը. քայց լաւ թող ըմբռնեն թէ 564 քուէով ալ եթէ ընտրութիւնը ընեն պակաս երեսփոխանաց տեղ, եւ նորերն ալ արժանեալ վրայ բազմին՝ Գաւառային երեսփոխանական վարչութիւն անունը կրելու իրաւունք չ'ունին, քանի որ ի հիմանց օրինապահութենէ զուրկ է եւ Աղեքսանդրիացիք իրենց Երեսփոխանը չ'են ներկայացուցած. ուրեմն թող աշխատին նոր անուն մը գտնելու:

Ձեր դիտողութեանը կը ձգեմ, ազնիւ ժողովուրդք, այս ընթացքով Բարձր. Ատենապետ փաշան խաբած չ'են ըլլար, որ իրեն պատուարքն չէ կրկնապար ժողովի մը ատենապետ ըլլալը:

Կ. ՄԻՉԱՆՅԱՆ

ԱնԱՀԻՏԻ Երկրորդ տարեշրջանին բաժանորդագրութիւնը բացուած է:

Պայմաններն են, տարեկան 12 Ֆր., օտար երկիրներ, 5 ռուբլի Ռուսիա, 2 տոլ. Ամերիկա, Վեցամսեաներն տարեկաններուն ճիշդ կէսերն են: Բաժանորդագիրն կ'Անիոյ է. գիմել առ:

A. TCHOBANIAN

6, Place de l'Odéon PARIS

ԱնԱՀԻՏԻ Գահիրէի գործակալն է Տիար Աշոտ Սեդրաք, բաժանորդագրուելու դիւրութեան համար փափաքողք կրնան անոր ալ գիմել և կ'Անիոյ վճարմամբ բաժանորդագրուի:

ՕՐԱՑՈՅՑ

1900

ԹՈՒԱՎԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ

ՍԵՓՍԿՈՒԹԻՆ

ՀԱՅՈՑ Ս. ՓՐԿՉԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՒԱՆԻԱՆՈՅԻՆ Կ. ՊՕՂՍՈՑ

Կը գտնուի «Արշալոյս» խմբագրատունը և Շարա Ապտիւլ Ազիզ Տիար Կ. Երզնկացեանի քով:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Անցեալ շաբաթ օր՝ նախարարաց ժողովը տեղի ունեցաւ Ապտիւլի պալատը, Ն. Բ. Վ. Խտիլի նախագահութեամբ:

Ժողովը վաւերացուց 1900 տարուայ պիւտճէն, Սէրտարի արտօնագիրը Սուտանի հանքերուն շահագործման մասին, ինչ-

(1) Մաքրի գիւղ. Ս. Ստեփանոյ, Ազալը զուրք միալով Կ. Պոլիս 24 թաղ ունի. աստիցմէ ոմանք միացնելով 20 թաղի վերածել թաղական խորհուրդին ընտրել, 150,000 հայ կեցած երկրի մը մէջ խառնութիւն չ'հանել, ի՞նչ է պատճառը եթէ ոչ օրէնքին գործադրութիւնը եւ պաշտօնից լրջութիւնը:

Հ Ե Ռ Ա Ք Ի Ր

16 Դեկտ. 99

պէս նաև կարգ մը անանոց որսորդութիւնը արգիլող կանոնադրութիւնը,

Վաւերացուց նմանապէս Մաթոսեան և Ընկ. նոր անանուն ընկերութեան վերածուելու առաջարկը:

Եթէ մեր քաղաք տեղեկութիւնները ստոյգ են, Մաթոսեան վաճառատունը բացուած պիտի ըլլայ, ամէն ունեւոր քսակի, պարզապէս ւսխոնական հաստատութիւն մը:

— Արարական «Միսր» օրաթերթէն կը քաղենք հետեւեալը:

Ն. Վ. Պողոս փաշա Նուպար, որ Անգլիական դրամատէրներու կարեւոր Սէնտիքայի մը ներկայացուցիչ է, հաղորդակցութեան մէջ մտած է գնելու համար եգիպտական երկաթուղոյ գիծը: Պողոս փաշա Նուպար մինչև իսկ մանրամասնորէն հետամտած ըլլալու է գծին և matérieli արժուութեան. չենք կարծեր որ այս ձեռնարկի բանակցութիւնը տեղի ունենայ տարեգլխէն առաջ:

— Տեղական լրագիրներու ըսածին նայելով, Իրէնս Սէյֆ-իլ-Տին խելագարած է: Իշխանը՝ սակայն, դեռ կը շարունակէ մնալ իր բանտին մէջ, և Տօքթօր Վարնօքի բժշկական քննութենէն վերջ միայն, վերջապէս պիտի որոշուի անոր հիւանդանոց փոխադրումը,

Իր խելագարութիւնը, ըստ ոմանց, կ'սկսի Գլիւպ Խտիվիալի մէջ ըրած սպաննութեան փորձի թուականէն:

— Պէրլինէ ստացուած տեղեկութիւններուն նայելով՝ Բափի գաղթականութենէն ութ հազար Հոլանտացիք ապստամբած են, Բրանսվալի իրենց համարին եղբայրներուն միանալով: պարագայ մը՝ որ լիուրի պիտի լրացնէ պակասը զոր պօսէրներ ունեցած ըլլան պատերազմի սկզբնաւորութենէն ի վեր:

— Եթէ օրինակը համաճարակի, եթէ ափրիքանտէրները միահամուռ հետեին այս յեղաշրջման, պատերազմը սոսկալի պիտի դառնայ և Լօրտ Վօլթէյ պէտք է պատրաստուի նոր զօրագնդեր ճամբայ հանելու:

« Պէրլինէր Թակէպլաթ » ի Լօնտրայէ ստացած լուրին նայելով՝ Անգլիոյ մէջ Ֆրանսացիներու դէմ գրգռումը կը ծաւալի և Անկլօ-Ֆրանսական պատերազմի մը գաղափարը հետզհետէ ընդհանրանալու վրայ է:

Ֆրանսական, Գերմանական, Աւստրիական և Իտալական մամուլը կը ծանրանայ ժէնէրալ Պիլլէրի կրած պարտութեան վրայ. շատ մը լրագիրներ կ'ըսեն թէ այս պարտութիւն մեծ հարուած մ'է Անգլիոյ ազդեցութեան:

— Ժէնէրալ Մէթուրնի Մաճէրս Փօնթէն ունեցած կորուստը 963 մարդու կը հասնի: Ժէնէրալ Մէթուրն վերստին փորձեց իր յարձակումը ի Մաճէրս Փօնթէն, բայց Պօէրներու կրակին զօրութիւնը ետ մղել տուաւ զինք:

— Սէրուար Բիչնէր, Օմտուրմանի հերոսը, պետ անուանուեցաւ Թրանսվալի Etat-Major ժէնէրալին:

— Անգլիական կառավարութիւնը կը խորհրդածէ պատեհականութեանը վրայ կազմելու կամաւորներու բանակ մը՝ արտասահման զրկելու նպատակաւ:

— Ժէնէրալ կաթաքրի պարտութիւնը ապստամբութեան մղեց հիւսիսային Հօլանտական տարրը, և կը վախցուի ամբողջ ափրիքանտէրներու շարժումէն:

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

ԳԱՀԻՐԷ. — Գ. Մ. — Ձեր զրկած թղթակցութիւնը հրատարակութեան արուելու արժանիքէն բոլորովին զուրկ է:

ՃԻՊՈՒԹԻ. — Եղբ. Թ. և Մ. Գ. ընկ. — ստացուած է Ձեր տարեկան բաժանորդագրիներն Տիար Ա. Է. ի միջոցաւ:

ՃԻՊՈՒԹԻ. — Չ. Խ. — Տր. Ա. Ս. Յ. է ստացուած է Ձեր տարեկան բաժանորդագրիները:

ՀԱՒԱՄՏԻՅԷ. — Պ. Բ. — Նոյնպէս:

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ. — Փ. — Ձեր պատասխանին կ'սպասենք անհամբեր:

» Ս. — Ձեր յիշատակած հրատարակութենէն մենք ստացած չենք:

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ. — Ե. Մ. Պօ. — Մանտա-բօսթը գանձեցինք, Ձեր առաջարկն ընդունելի է:

ԶԱԿԱԶԻԿ. — Ս. Փ. — Զ'յ, Ֆրանք մէկ թերթի գինն է: Եթէ այդ տեղէն 5-10 բաժանորդ միանգամայն գտնէք, մենք ձեր կողմանէ յանձն կ'առնենք «Բաղմալէպ» Պատ. խմբագրութեան գրել:

» Եղբ. Ճ. — Նամակը և ներփակեալ 165 զրուշի մանտա-բօսթը ստացանք:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳԵՂԵՑԻԿ ՍԵՌԷՆ

Պատուական թերթի մէջ յաճախ կը գրէք ու գրուածներ ալ կը հիւրընկալէք իգական սեռի իրաւանց պաշտպանութեան համար, կարելի է

արդեօք որ փոքր տեղ մ'ալ մեզ՝ աղջիկներուս համար չ'տորհէք:

Ճշմարիտ է թէ մեք՝ կամ աւելի ճիշդը ևս, չպիտի կրնամ ընթերցողներու գրական ճաշակը գոհացնել, բայց երբ խնդիրը տկար դասուն վրայ է, լեզուատ ու համբարածներու իրաւունքին կը պատկանի, և իրէք չեմ կարծեր որ կարգացող դասը այնքան անխիղճ գտնուի:

Գուցէ հիմայ մտածող ըլլայ թէ՛ ահա աղջիկներն ալ սկսան հրապարակ նետուիլ, տիրող ոգևորութեան մէջ տեղ ու աթոռ փնտռել ու դասաւորութեանց ցանկին մէջ իրենց ալ մտնելու իղձը յայտարարել. բայց Տիար Սիբաքի, քա՛ւ լիցի թէ մենք, աղջիկներս, մեր չափն ու սահմանը չ'գիտնանք կամ մեր իրաւունքին այնպիսի սահման մը դժեմք, որ անիրաւութիւն համարուի. բնաւ սակայն երբ տեսնենք թէ տիրող մթնոլորտին մէջ ամեն թռչուն իր բոյնին կը տիրանայ և կենաց իրական պայքարին մէջ բոլոր մարդիկ իրենց հացն ու իրաւունքը կ'աղաղակեն, մի՛ք, աղջիկներս, ինչո՞ւ պէտք է զրկուինք մեր իրաւունքէն:

Իրողութիւն մ'է թէ թերթեր, հրապարակախօսներ կը գրեն, կը խօսին, միշտ նոր սերնդին, երիտասարդ դասուն, կանանց բաժնին, եւ այնչեալն շատ մը նիւթերու վրայ. բայց ո՞վ ինչ գրեց աղջիկներու ներկային վրայ և ո՞վ մտաբերեց թէ անոնք ալ իրաւունք մը ունին, ստեղծող Աստուածը անոնց ալ լեզու մը տուած է ու անոնք ալ տեղ մը գրաւելու են. միթէ դեռ սպասելու է որ մեր կարգին ալ մէկը պաշտպան, ախոյեան հանդիսանայ:

Գուցէ հիմակ անհամբերները զայրանան ու մէկէն ի մէկ ըսեն թէ՛ աղջիկներ, չ'ուտ ըրէք, դուք ի՞նչ կուզէք:

Պատուական ծնողներ ու յարգելի եղբայրներ, խնդրեմ մի՛ աճապարէք. որպէսզի աւելի յստակ կերպով կարենանք պարզել մեր կացութիւնը:

Մեր կացութիւնը կը նմանի ցանցի մը մէջ բռնուող ճիւղուկի մը գրութեանը. նա կը տեսնէ կապոյտ կթերը, ծառն ու ծառաստանը, թուփն ու բլուրը և երբ թեւաբաց թռչիլ ուզէ, խոյանայ, կըզայ յանկարծ թէ բռնուած է, ազատ չէ: Մենք ալ այդպէս ենք. ընտանի յարկին նահապետական հնացած ճնշումը միշտ կ'ախտած է Գողթնի լախսին պէս՝ մեր գլխին վերեւ, որմէ հետո կեանքի ու սովորոյթի վայելչութիւնը կը ցոլանայ իւր լուսեղէն ճառագայթներով. բայց երբ փորձուի անոր հայիլ, փոքր մը մօտենալ, ահա յուսախաբութիւնը կ'զգացնէ մեզի թէ դեռ ազատ չենք:

Սովորոյթ, վայելչութիւն ըսածովս, զգեստի, ձեւի, արգուզարդի վայելչութիւն չ'հասկցուի. միտքս կըթ ութենէ ծագում առած վայելչութեան վրայ է. որուն համար չ'պիտի մտածեմ թէ կը մեղադրուիմ:

Այո՛, կըթութիւն և դաստիարակութիւն՝ կանոնաւոր վարժարանի մը մէջ: Սակայն ո՞ւր է դպրոցը երբ մենք այսպէս ո՛չ ընտանեկան յարկի գոհացուցիչ խնամքը, ո՛չ դպրոցի գոյութեան հրաշալի փրկութիւնը կը վայելենք, մեզ աղջիկներուս համար կենդանւոյն մեռնիլ նոսաւտակուիլ ըսել չէ՞. ու զարգացումէ առաջացած ապագայի ստոյգ բարօրութիւնը զոհել ներկայի շատ ցաւալի անփութութեանս եւ կը կարծեմ թէ Գահիրէի մէջ դպրոց ըսուած ատեն միայն մանչերունը կը հաս-

ԼԱ ՄԻԻԹԻԻԷԼ ԼԱՅՅ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԻ ԱՍԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ

ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ ՄԻԼԻԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները:

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամի նպատակին համար 3 ՄԻԼԻԱՐ 480 ՄԻԼԻՈՆ որ գրեթէ աշխարհի ուրիշ որ և է ընկերութենէ մէկ միլիար աւելի է:

Ս. ԼէՌՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ:

Աշխարհի մէջ գոյնուող ուրիշ որ և է ընկերութենէ աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրի կը գանձէ:

ԱԼԷՔՍԱՆԸ ԼԱՎԻՍԸՆ գլխաւոր գործ. յ'Աղէքսանդրիա:

կցուի, բնորոշին մտացույթիան դատապարտուած աղջիկներունը, արդեօք «աւելորդ ալ է» ըսող ու մտածողներ չ'կան միթէ. ես ինքս մեր տանը մէջ գիրք մը, պատմութիւն մը, թէ ինչպէս կարգավի վրայ կը մտածեմ, որովհետեւ ծնողքս . . .

Իսկ մայր կարուհիս ինձ համար փրկարար հրեշտակ մէջ, այնքան լուսամիտ որ իր քով ունեցած պարագ միջոցիս կը հրամայէ ինձ, որ գրքի մը կամ պատմութեան մը մէկ կտորէն բարձրաձայն կարդամ. իսկ երբ «Արշալոյս»ի երեւումի օրերն ըլլայ, սանդուխի թփրտոցին հետ է խելքերնիս, ցրուիչի ձեռքէն խլելու համար թերթը, յորում աւելի հետաքրքիր աչօք կսկսիմք փնտնել թէ՛ արդեօք կայ մեր իրաւանցը պատկանող սիրուն կտորներ: Ահա մեր այս վիճակին մէջ անցեալ օր երիտասարդ բարեկամ մը, զայրոյթով կը խօսէր ընտանեկան խմբակի մը մէջ, օրհորդի մը հետ խօսած առեն անոր անհամարձակ ու սլաղ երեւոյթ մը ունենալը բնական վրայ. բայց երիտասարդ պարտը մտածեց անգամ մը իր քոյր աղջիկներուն դաստիարակութեանը, վրայ՝ Դպրոցի մը գոյութեանը կամ եղածին շատ անկերպարան վիճակի մասին:

Դպրոցը, դաստիարակութիւնը ոեւի մը հոգեկան ու մտաւորական կարողութիւնը բարձրացնող աստուածն է. ու եթէ այդ աստուածը ձեռք դնէր մեր աղջիկներուն վրայ, ես ռեւէ պատճառ չ'լիտի ունենայի մեղքնալ Լուսնթագը, որ ամենուս յայտնի ու հաւանական բռնութեան գերիս կը լինի, ինչպէս կ'ըսէր օր մը «Աստղիկ» թերթիդ մէջ: Հետեւաբար Տ. Սմբագիր իրական դարման մը պէտք է ոչ միայն մեր, այլ գէթ հետզհետէ նոր հասնող մտքի մշակութեան գուրկ Ձեր շատուոր քոյրերուն համար: Կարելի չ'է միթէ . . . եւ ո՞ր իրաւամբ կարելի չ'է:

Ի՞նչ պիտի թողու՞ք որ մեք՝ Ձեր քոյրերը, չ'բարձրանանք չկանգնինք դաստիարակութեամբ եւ գորգացմամբ:

Գահիրէ 8 Դեկտ. 1899 ԱՐՈՒՍԵԱԿ

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԵԱՏ ԶՈՒԱՐԱՁԱԼԻ ԵՒ ՀՐԱՀԱՆՓՈՒՅ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՆԻՔԴՈՏՆԵՐ ԵՒ ՎԷՊԻԿՆԵՐ ԿԱՄ

ՄԱՐԴԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐԱԳՈՅՐԸ

անուշով գրքին որ Հայկական, Յունական, Ռուսական, Արաբական, Պարսկական եւ Թրքական կեանքի տեսնուած է:


Հաւանց եւ կարգաւորեց Մ. ՀԱՅՅՈՒՆԻ

Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆԻ տարանէն մաքուր եւ ճաշակաւոր տպագրութեամբ շուտով լոյս կը տեսնէ եւ 16 էջերէ բաղկացեալ տետրակներով ամեն շաբթու կը յանձնուի բաժանորդաց սոյն օգտակար հրատարակութիւնը. այլազան ազգերու կեանքէն առնուած բազմադիմի պատկերներով, որք ամեն դասակարգի ընթերցողներն՝ այր կամ կին. ուսեալ կամ անուս. հարուստ կամ աղքատ, ծիծաղներով զուարճացնելէ դատ, պիտի ծանօթացնէ աշխարհի զարմանալի եւ սարսափելի գաղտնիքները, հիանալի միջոցները երջանիկ լինելու. հատուցող գողեր, իմաստուն դատաւորներ, ապուշ ամուսիններ, ճարպիկ խաբէրաներ եւլն. եւլն. իրենց գործերով եւ անոնց արդիւնքներովը, որոնք պիտի նպաստեն ընթերցողին կուշտ, կուշտ խնդալէ յետոյ՝ կենաց պայքարին մէջ յաջողիլ եւ չի խաբուիլ ամենեւին. եւ՝ լինիլ հմուտ եւ փորձառու կեանքի ամեն պարագաներուն մէջ:

Գրավաճարներու եւ 20 օրինակէ աւելի բաժանորդագրուողներու մասնաւոր գեղջ պիտի լինի: Դիմել առ Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆ Ի Գահիրէ (Հապպանիէ):

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԹԷՅԻ

Գ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ ԸՅԻ ՇԱՐԷ-ԱՊՏԻԻԼ-ԱԶԻԶ



Թէյի գործածութեան ընդհանրանալովը, ի՞նչի ճաշակն եւ նրբացած է. որով թէյի առևտուրն վաճառականութենէ աւելի արուեստ մըն է որ միայն երկարատեւ եւ ճոխ առևտուրէ յառաջ եկած փորձառութեամբ կ'ստացուի:

Մեր տունն, որ արդէն հանրածանօթ է իր քսանամեայ գոյութեամբ եւ ընդարձակ գործառնութեամբ, այս տարի եւ իր մասնաւոր գործակալաց ձեռամբ գնած է բազմազան եւ մեծաքանակ ընտիր թէյեր ՉԻՆԱՍՏԱՆԻ, ՃԱՎԱՅԻ, ՍԷՅԼԱՆԻ եւ ՀՆԻԿԱՍՏԱՆԻ գլխաւոր արտադրիչներէն, որոցմէ արդէն հասած է մեզ. ինչպէս նաև ձըմեռուան եղանակի յարմար թէյեր, որոնք իրենց գերնտիր հոտաւետութեամբ ամեն ճաշակի յարմար ըլլալով հանդերձ, գներու ՉԱՓԱՉԱՆՑ աժանութեամբ ալ ամեն քսակի գիրամատչելի են:

Թէ կ. Պոլսոյ եւ դաւառաց, եւ թէ օտար երկիրներու մէջ մեր տան ցոյց արուած վստահութիւնն կը քաջալերէ մեզ, առաւել եւ յարիլ մեր սկզբունքին, որ է՝

Ուղղամտութիւն Թէյերու տեսակի, կօխի եւ զոնց մասին:

Մեծաքանակ թէյ փոքրաքանակ մեզի եղած կ'ԱՆՆԻԿ դրամով յանձնարարութիւնք փութով կը կատարուին:

2 — 50

ՃԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ

Կիրակի 17 Դեկտեմբեր 1899

Ա. Թիւ	9098	շահած է	Ֆրանք	1000
Բ. "	7759	"	"	200
Գ. "	1596	"	"	100
Դ. "	3348	"	"	50
Ե. "	1054	"	"	50

Հետեւեալք 25 ական ֆրանք կը շահին

3077	329	5304	7521	6966	5294
5616	4835	3203	6082	9425	6237
5752	9086	9731	2053	6430	474
	5623	7660	862	3885	

ԾԱՆՕԹ. — Այն շահող թիւերը որոց վիճակեալ պարգևներն ութը օրէն չեն գանձուիր, Ընկերութեան անտուկին սեփականութիւնը կը լինին:

Տպագրութիւն Ա. Ա. ԴԱՐԲԻՆԵԱՆ

ԼԵՒՈՆ ԿԻՄԻԹԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԱՄԵՆ ՏԵԱԿ ԺԱՄԱՅՈՅՆԵՐՈՒ

ՅՕՆՕԿՐԱԾ

Գ.Ա.ՀԻՐԷ. — Մուսի փողոց, — Գ.Ա.ՀԻՐԷ: Ս. եւ Ս. Սեհնավի վաճառատան դիմաց

Վերջերս հաստատած իւր վաճառատան մէջ կը գտնուի պատի եւ քօնօլի ընտիր տեսակէ բանտիւններու մեծ մթերք:

ԴԻՄԵՑԷ՛Ք ՀՈՆ եւ պիտի գտնէք ամէն ճաշակի յարմար զանազան տեսակ արանց եւ կանանց ժամացոյցներ, աղամանդաւոր, ոսկի, արծաթ եւ նիւր:

Յրանապան եւ ամբիկեան ապրանց ամենաընտիր տեսակներէն զարդեղէններ, շորաներ, օղիք, մասանիներ եւայլն:

Ամէն տեսակ ժամացոյցներու նորոգութիւն կը լինի, արհեստին կատարելագործութիւններուն ծանօթ ժամագործի մը միջոցաւ:

ԳԻՆԵՐԸ ԽԻՍՏ ԶԱՓԱԻՈՐ

41—50

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Ամենափափուկ ստամոքս ունեցողներուն համար.

Մի՛ ուտէք երբէք այն հացերէն, որոնք զուրկ են փորձառու եւ վարպետ հացագործի մը միջոցաւ պատրաստուած ըլլալու առաւելութիւններէն:

Երբ մեր ամեն օրուան կերած հացերը լաւ եփուած տեսակէն չեն, դժուարամարտութիւն կը պատճառեն եւ հետեւաբար շատ մը հիւանդութեանց ենթակայ կ'ընեն զմեզ:

Այս հիւանդութիւններէն եւ հետեւաբար բժշկաց յաճախ այցելութիւններէն ազատ մնալու միակ միջոցն է՝ գլխեւ

ԵԿԱԻՕՑ ԵՒ ԸՆԿ

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՓՈՒՈՐ

Յուզի Պաֆ վաճառատան մօտերը, Կամե-էլ-Պեհաքի հիւս դիմացը

ԵԿԱԻՕՑ ԵՒ ԸՆԿ. բազմաթիւ նորանոր յաճախորդներէ գտած ընդունելութիւններէն քաջալերուած, պատիւ ունին յայտարարելու թէ՛ իրենց փուռին մէջ պատրաստուած ընտիր հացերը զուտ եւ անխարդախ այլուրէ պիտի ըլլան միշտ:

ԵԿԱԻՕՑ ԵՒ ԸՆԿ. թեան փուռին մէջ գաղղիական, անգղիական, գերմանական եւ յունական հացեր պիտի պատրաստուին, իրենց տեսակին մէջ անմիջեղի ըլլալու պայմանաւ:

ԵԿԱԻՕՑ ԵՒ ԸՆԿ. ամենամեծ խնամքով պիտի պատրաստեն սուրճի, թէյի եւ կաթի պարզամթերք եւայլն:

ԵԿԱԻՕՑ ԵՒ ԸՆԿ. թեան եղած յանձնարարութիւնք ամենայն ճշգրտութեամբ եւ փութով կը կատարուին:

45—50

Le Gérant Dr A. S. HAGOPIAN